



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 24 >> 04 2017թ.

N: _____

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՒՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ.

Այսօր աշխարհում սփռված համայն հայությունը գլուխ է խոնարհում և հարգանքի տուրք մատուցում անցյալ դարասկզբին օսմանյան Թուրքիայում ցեղասպանության զոհ դարձած ավելի քան մեկուկես միլիոն անմեղ նահատակների հիշատակի առջև: Ողբերգություն, որի հետևանքներն իրենց զգացնել են տալիս նաև այսօր: Այդ եղերական իրադարձություններից անմասն չմնացին նաև հազարավոր շիրակցիներ, որոնց աճյուններն ամփոփված են Հեր Հերի ձորում: Համոզված ենք, որ պատմական արդարության վերականգնումն անխուսափելի է, և այսօր տասնյակ առաջադեմ ու ժողովրդավար պետություններ ճանաչել են հայության դեմ 20-րդ դարում իրագործված ամենահրեշավոր ոճրագործությունը:

Խոնարհվելով անմեղ զոհերի հիշատակի առաջ՝ մենք պետք է համախմբվենք մեր ազգային նպատակների ու գաղափարների շուրջ՝ հանուն մեր պետության և ժողովրդի լուսավոր ապագայի:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ